

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

«---» ----- 2021թ.

N -- -Ն

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի  
N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2021 թվականի ծրագրի վերաբերյալ» N315-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) Հավելվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Գույքը կարող է տրամադրվել անհատույց օգտագործման կամ անհատույց օտարվել, ինչպես նաև ուղղակի ձևով վարձակալության տրամադրվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ՝ բացառությամբ Ծրագրի 4-րդ կետի, 33-րդ կետի և 41-րդ կետի 4-րդ ենթակետի»,

2) հավելվածի 33-րդ կետը «ուղղակի ձևով» բառերից հետո լրացնել «Երևանի քաղաքապետի կողմից» բառերով,

3) Ծրագրի VI-րդ գլուխը լրացնել ` նոր 5-10-րդ կետերով ` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

5	Ավան	01-002-051-013	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	Ավան 4-րդ փող., 4-րդ նրբ հ.23	
6	Արաբկիր	01-003-108-048	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Բաղրամյան պող. 4-րդ նրբ հ.38/1	
7	Արաբկիր	01-003-224-234	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Արաբկիր 53-րդ փողոցի հ.1/7 հասցեին կից	
8	Դավթաշեն	01-004-110-382	Բնակավայրերի	Հասարակական կառուցապատման	Դավթաշեն 3-րդ թաղամաս հ.12/7	
9	Էրեբունի	01-005-224-039	Բնակավայրերի	Խառը կառուցապատման	Աճեմյան 2-րդ փող. հ.131/2	
10	Նուբարաշեն	01-010-1162-001	Բնակավայրերի	Բնակելի կառուցապատման	Նուբարաշեն 16-րդ փողոցին հ.1 հասցեին կից	

»:

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք – Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

1.	<b>Խնդրի սահմանումը</b>
	<p>«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանին որոշում է ընդունում Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրի վերաբերյալ, որում նշված են օգտագործման տրամադրման կամ օտարման եղանակը, ժամկետները, նպատակը, օգտագործման տրամադրման դեպքում՝ օգտագործման ժամկետը և վճարի չափը, ուղղակի վաճառքի դեպքում՝ վաճառքի գինը, իսկ հրապարակային սակարկությունների դեպքում՝ մեկնարկային գինը, ընդ որում՝ հողամասերի օտարման տարեկան ծրագրի մեջ պետք է նշվեն նաև հողամասերի գտնվելու վայրը, ծածկագրերը, Երևանի գլխավոր հատակագծով սահմանված նպատակները և օտարման եղանակները:</p>
2.	<b>Առկա իրավիճակը</b>
	<p>Իրավական որոշակիության սկզբունքներից ելնելով փոփոխություն է կատարվում Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման հավելվածի 3-րդ և 33-րդ կետերում, որով հստակեցվում են Երևանի քաղաքապետի և Երևան քաղաքի ավագանու լիազորությունները գույքն ուղղակի ձևով վարձակալության տրամադրելու ժամանակ: Գործող օրենսդրության համաձայն համայնքային գույքը (բացառությամբ հողամասերի) վարձակալության և անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման կարգը և դեպքերը սահմանվում են Երևան քաղաքի ավագանու որոշմամբ:</p> <p>Երևան քաղաքի ավագանու մի շարք որոշումներով արդեն իսկ հաստատվել են օգտագործման տրամադրման և օտարման համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ցանկեր: Երևանի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման հավելվածի 44-րդ կետով 2021 թվականին օտարման և (կամ) օգտագործման տրամադրման համար առաջարկվող գույքի կազմում ներառվել են Երևան քաղաքի ավագանու որոշումներով հաստատված Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2010-2020 թվականների ծրագրերում ընդգրկված, սակայն դեռևս չօտարված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքը և հողամասերը: Միաժամանակ ցանկում չներառված հողամասերի ծածկագրերը հնարավորություն չեն տալիս անհրաժեշտության դեպքում այն օգտագործման տրամադրել կամ օտարել:</p>
3.	<b>Կարգավորման նպատակը</b>
	<p>Նախագծով Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման հավելվածում կատարվող փոփոխությունը և լրացումները նպատակ են հետապնդում հստակեցնել Երևանի քաղաքապետի և Երևան քաղաքի ավագանու լիազորությունը, ինչպես նաև 2021 թվականի օգտագործման տրամադրման և օտարման համար առաջարկվող հողամասերի ցանկը լրացվում է ևս 6 միավորներով:</p>
4.	<b>Ակնկալվող արդյունքը</b>
	<p>Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու արդյունքում կհստակեցվեն Երևանի տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, Երևանի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման տարեկան ծրագրում կներառվեն դեռևս չօտարված և օգտագործման չտրամադրված Երևան համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասերը, որոնց օգտագործման տրամադրման և օտարման արդյունքում կավելանա Երևան համայնքի բյուջեի մուտքերը: Որոշման ընդունումը նպատակաուղղված է համայնքային գույքի հետագա օգտագործման արդյունավետության բարձրացմանը:</p>

5.	<b>Նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը</b>
	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կարող է կատարվել միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չկա:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N 315-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N315-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում եկամուտների և ծախսերի էական փոփոխություններ չի նախատեսվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ**